«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
Ռեկտոր տ.գ.դ., պրոֆեսոր
Դ.Ռ. Գալոյան

«____» __02__ 2021թ.

# ԿԱՐԾԻՔ

**Հայկանուշ Գուրգենի Այվազյանի «Օտարերկրյա ուղղակի ներդրումների ազդեցությունը տնտեսական աճի վրա (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.06 - «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:**

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Միջազգային տնտեսական հարաբերությունների» ամբիոնի 2021 թվականի հունվարի 29-ի նիստում (արձանագրություն N 4-2021):

*Մասնակցում էին՝*

**Նազարյան Գրիգոր՝** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ (ամբիոնի վարիչի պաշտոնակատար) **Հախվերդյան Դավիթ՝** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, **Թադևոսյան Զոյա՝** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, **Կիրակոսյան Վերգինե՝** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, **Մարգարյան Թամար՝** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, **Անանյան Անուշ՝** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, **Ավետիսյան Թադևոս՝** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, **Սարգսյան Ժորա՝** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, **Փախլյան Աննա՝** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ (գրախոս), **Ժամկոչյան Անահիտ՝** տնտեսագիտության թեկնածու,

դոցենտ, **Ֆահրադյան Նարինե՝** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, **Մկրտչյան Արա՝** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ (գրախոս), **Հայրապետյան Ալբերտ՝** տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ, **Աղաջանյան Լուսինե՝** տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ, **Աղաջանյան Սուսաննա՝** տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ, **Խաչատրյան Լիլիթ՝** տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ, **Ուլիխանյան Տաթևիկ՝** տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ, **Շեկոյանը Նարինե՝** ավագ լաբորանտ:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսական աճը, բարդ ու բազմակողմանի տնտեսական երևույթ է, տնտեսագիտության տեսության և տնտեսական քաղաքականության կարևոր հիմնախնդիրներից մեկը: Տնտեսական աճը երկրի տնտեսության զարգացման ամփոփ բնութագրիչն է, որը պայմանավորված է ոչ միայն արտադրական ռեսուրսներով, քաղաքականությամբ, օրենսդրությամբ, այլև բազմաթիվ հոգեբանական ու սոցիալական գործոններով:

Տնտեսական աճի հիմնախնդրի հետազոտման կարևորությունը պայմանավորված է ոչ միայն հասարակական վերարտադրության օրինաչափություններն ավելի խորությամբ պարզաբանելու և տնտեսավարման պրակտիկայում կոնկրետացնելու անհրաժեշտությամբ, այլև շուկայական տնտեսության մեխանիզմի հետ ունեցած անմիջական կապով: Տնտեսական աճը յուրաքանչյուր պետության կողմից դիտվում է որպես կարևոր նպատակ, հասարակության բարգավաճման և նրա բարեկեցության բարձրացման նյութական հիմք: Այն հասարակական արդյունքի քանակական մեծացումն ու որակական կատարելագործումն է, որը հնարավորություն է տալիս ընդլայնել երկրի տնտեսության հնարավորությունները հասարակության պահանջմունքներն առավելագույն չափով բավարարելու համար: Տնտեսական աճ ապահովող տնտեսությունն ավելի մեծ հնարավորություններ ունի նոր սոցիալական ծրագրեր իրականացնելու, աղքատության և

շրջակա միջավայրի խնդիրները լուծելու ուղղությամբ՝ առանց գոյություն ունեցող սպառման ընդհանուր մակարդակը նվազեցնելու և ներդրումների ծավալները կրճատելու:

Ի թիվս բազմաթիվ այլ գործոնների՝ տնտեսական աճի վրա էական ազդեցություն ունեն նաև ներդրումները, որոնք էլ ավելի են կարևորվում զարգացող տնտեսություն ունեցող երկրների համար, քանի որ վերջիններս տեղական ներդրումներից բացի ստիպված են վարել օտարերկրյա ներդրումների ներգրավման քաղաքականություն՝ բավարարելու համար ազգային տնտեսությունում ներդրումների նկատմամբ չբավարարված պահանջարկը:

Այս ամենն էլ ավելի է կարևորվում ՀՀ-ի համար, քանի որ բացի զարգացող երկրներին բնորոշ հիմնախնդիրներից, մեր հանրապետության առջև ծառացել են նաև պարտադրված, չկանխատեսված և այդ ամենի տրամաբանական հետևանք հանդիսացող մի շարք տնտեսական և ոչ տնտեսական հիմնախնդիրներ:

Վերոհիշյալ հարցադրումների քննարկմանն ու որոշակի առաջարկությունների մշակմանն է նվիրված «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Հայկանուշ Այվազյանի ատենախոսությունը: Ներկայացված հիմնախնդիրներով էլ պայմանավորված է թեմայի ընտրությունն ու արդիականությունը:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական նպատակն է ուսումնասիրել ՕՈՒՆ-երի և տնտեսական աճի փոխկապվածություն և ստացված արդյունքների հիման վրա ներկայացնել ՀՀ օրինակով ճշգրիտ լուծումներ:

Դրված նպատակին հասնելու համար աշխատանքում կարևորվել են հետևյալ խնդիրները.

✓ Ուսումնասիրելով ներդրումների և տնտեսական աճի տեսամեթոդական հիմքերը՝ ներկայացնել տնտեսական աճի էությունը, գործոնները և շարժիչ ուժերը, ներդրումների խրախուսման ձևերը և համակարգերը,

✓ ներկայացնել ՕՈՒՆ-երի՝ տնտեսական աճի վրա ունեցած հնարավոր ազդեցության տեսամեթոդական ձևերը և մեխանիզմները,

✓ պանելային վերլուծության շնորհիվ թվային տեսքով վերլուծել և ներկայացնել ՕՈՒՆ-երի ազդեցությունը տնտեսական աճի վրա երկրների օրինակով,

✓ ներդրումների ներգրավման տեսանկյունից ուսումնասիրել ՀՀ մրցակցային առավելությունները և խոչնդոտ գործոնները: Վերջիններիս հիման վրա մշակել երկրի ներդրումային գրավչության բարելավման մեթոդներ և մեխանիզմներ:

✓ Հետազոտել ՀՀ տնտեսության մեջ օտարերկրյա ուղղակի ներդրումների վերլուծական բնութագիրը ըստ տարիների, ոլորտների և երկրների,

✓ ժամանակային շարքերի վերլուծության շնորհիվ բացահայտել ՀՀ-ում ՕՈՒՆ-երի և տնտեսական աճի փոխկապվածությունը և ներկայացնել ՀՀ տնտեսական աճի ապահովումը ներդրումային գրավչության բարձրացման ճանապարհով:

## ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսությունում կատարված հետազոտությունների և վերլուծությունների ընթացքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական արժեք ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ ներկայացվել են հետևյալ դրույթները.

1. Պանելային վերլուծության մեջ, ներառելով հետազոտության հետաքրքրության մեջ առկա գործոնները, ստացվել են թվային տեսքով արդյունքեր 87 երկրների համար: Այս վերլուծության առանձնահատկություններից է այն, որ վերջինս հնարավորություն է տալիս արդյունքները դիտարկել առանձին զարգացող և զարգացած երկրների համար: Արդյունքները վկայում են ՕՈՒՆ-երի և տնտեսական աճի միջև առկա դրական փոխկապվածության մասին, ընդ որում 7 զարգացող երկրների դեպքում այդ դրական փոխկապվածությունն ավելի մեծ է, քան զարգացած երկրների դեպքում:

2. Ժամանակային շարքերի վերլուծության հիման վրա ՀՀ օրինակով գնահատվել է ՕՈՒՆ-երի ազդեցությունը տնտեսական աճի վրա, ներկայացվել են կանխատեսումների և հնարավոր արտաքին ազդակների դեպքում այդ փոխկապվածության զարգացման հեռանկարները: Մասնավորապես հաստատվել է ՀՀ-ում ՕՈՒՆ-տնտեսական աճ հարաբերակցության միջև գոյություն ունեցող դրական փոխկապվածությունը: Ընդ որում հետազոտության արդյունքները վկայում են, որ այդ փոխկապվածության զարգացման տենդենցը այլ ազդակների պարագայում նախատեսում է պահպանել կայուն տրենդ:

3. Ատենախոսական աշխատանքի հիմքում դիտարկվել են ՕՈՒՆ-երի՝ տնտեսական աճի վրա ունեցած ոչ միայն ուղղակի, այլև անուղղակի ազդեցությունները: Հետազոտական արդյունքները փաստում են, որ ՀՀ-ում ՕՈՒՆ-երը դրական ազդեցություն կարող են ունենալ տնտեսական աճի վրա նաև անուղղակի՝ նպաստելով համախառն կապիտալի ավելացմանը և արտահանման ծավալների աճին, վերջիններս էլ իրենց հերթին՝ տնտեսական աճին: Միևնույն ժամանակ ՕՈՒՆ-երի միջնորդությամբ ձևավորված տնտեսական աճը իր հերթին հաջորդ ժամանակահատվածում կարող է տնտեսական աճի պատճառ հանդիսանալ: Ընդ որում ՕՈՒՆ-երի շարունակական աճի դեպքում տնտեսական աճի ծավալները կավելանան ինչպես ուղղակիորեն ՕՈՒՆ-երի ազդեցության հետևանքով, այնպես էլ անուղղակիորեն ձևավորված տնտեսական աճի հաշվին: Ձևավորված գործընթացը կարող է դառնալ շղթա, քանի որ ՕՈՒՆ-երը ձևավորում են տնտեսական աճ, իսկ տնտեսական աճը հակադարձ ազդեցության շնորհիվ նպաստում է դեպի երկիր ՕՈՒՆ-երի ծավալների ավելացմանը:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ստացված արդյունքները կարող են կիրառվել Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման ուղղությամբ տարվող քաղաքականության մեջ, կարող են կիրառվել մշակվող հայեցակարգերում և զարգացման ծրագրերում: Աշխատանքի արդյունքերը պիտանի նշանակություն կարող 8 են ունենալ հետագա հետազոտությունների և վերլուծությունների համար: Քանի որ աշխատանքում

դիտարկվել են նաև տարբեր երկրների օրինակով ՕՈՒՆ-երի և տնտեսական աճի փոխկապվածությունը, ինչպես նաև ներկայացվել են այդ կապի տեսամեթոդական մեխանիզմները, աշխատանքը կարող է կիրառելի լինել նաև մի շարք միջազգային կազմակերպությունների և վերլուծական կենտրոնների համար:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից և հապավումների ցանկից: Աշխատանքը շարադրված է 132 էջի վրա (առանց հավելվածների) և ներառում է 10 աղյուսակ, 29 գծապատկեր և 26 հավելված:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից հավելվածներից և հապավումների ցանկից:

Աշխատության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության գլխավոր նպատակը և խնդիրները, ներկայացվել են հիմնական գիտական արդյունքները և դրանց գործնական նշանակությունը, տրվել են ատենախոսության տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը:

Ատենախոսության առաջին՝ **«Օտարերկրյա ուղղակի ներդրումների և տնտեսական աճի խթանման տեսամեթոդական հիմքերը»** գլխում ներկայացվել են տնտեսական աճի էությունն ու տեսակները, տնտեսական աճի գործոնները, շարժիչ ուժերը, ինչպես նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների էությունը, խրախուսման ձևերն ու մեթոդները:

Ատենախոսության երկրորդ՝ **«Օտարերկրյա ուղղակի ներդրումները որպես տնտեսական աճի ապահովման կարևոր բաղկացուցիչ»** գլուխը նվիրված է

օտարերկրյա ուղղակի ներդրումներին՝ որպես տնտեսական աճ ապահովող առանցքային գործոնի, ինչպես նաև իրականացվել է էմպիրիկ պանելային հետազոտություն՝ երկրների օրինակով գնահատելու օտարերկրյա ուղղակի ներդրումների ազդեցությունը տնտեսական աճի վրա:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ տնտեսական աճի ապահովումը ներդրումային գրավչության բարձրացման ճանապարհով»** գլխում վերլուծվել է ՀՀ մրցակցային առավելություններն ու խոչնդոտող գործոնները ներդրումների ներգրավման հարցում, ՀՀ տնտեսության մեջ օտարերկրյա ուղղակի ներդրումների դինամիկան և հիմնական միտումները, ինչպես նաև իրականացվել է ժամանակային շարքերի վերլուծություն՝ գնահատելու օտարերկրյա ուղղակի ներդրումների՝ տնտեսական աճի վրա արդյունավետության բարձրացման հեռանկարները ՀՀ-ում:

Եզրակացություններ և առաջարկություններ բաժնում ներկայացվել են հետազոտության տեսական և մեթոդաբանական հարցերի ուսումնասիրությունից բխող եզրահանգումներ, ներկայացվել են վերլուծությամբ հիմնավորված առաջարկություններ:

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**1.** Աշխատանքում տեսական բնույթի, դասագրքային ճշմարտություններին (արտադրական հնարավորությունների կոր, արտադրական ֆունկցիա, ներդրումների սահմանումներ և այլն) ծավալուն տեղ է հատկացված, ինչը կարող է բնորոշ լինել «Ը.00.01 – Տեսական տնտեսագիտություն» մասնագիտությամբ ատենախոսությանը:

«Ը.00.06 – Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտության շրջանակներում նպատակահարմար կլիներ դիտարկել նաև առանձին երկրների փորձը, իրականացնել մի խումբ երկրների մակրոտնտեսական ցուցանիշների համեմատական վերլուծություն:

**2.** Ատենախոսության նպատակը հեղինակի կողմից սահմանվել է. «... ուսումնասիրել ՕՈՒՆ-երի և տնտեսական աճի միջև փոխկապվածությունը և ստացված արդյունքների հիման վրա ներկայացնել ՀՀ օրինակով ճշգրտված լուծումներ» (էջ 4),

մինչդեռ անհասկանալի են, թե ինչ փոխկապվածություն պետք է ուսումնասիրվեր հեղինակի կողմից, որի հիման վրա էլ ճշգրտեին ՀՀ օրինակով լուծումները:

**3.** Նորույթներն առավել նպատակահարմար է խմբագրել՝ դրանք ներկայացնելով հակիրճ և ըստ էության:

**4.** Գրականությունը բավական հնացած է, հիմնականում ընդգրկում է մինչև 2009թ. հրապարակված աղբյուրներ, հազվադեպ բնույթ են կրում 2010թ-ից ավելի թարմ աղբյուրները:

**5.** Նպատակահարմար կլիներ, եթե ատենախոսության տեքստում և Հավելված 1-ում նախորդ դարաշրջանի տնտեսական աճի մոդելներից և տեսություններից զատ. առավել մեծ ուշադրություն արժանացվեր 21-րդ դարում որպես տնտեսական աճն ուղղորդող նորագույն գործոններ դիտարկվող ինստիտուցիոնալ, վարքագծային և այլ գործոնները:

**6.** Ատենախոսության շրջանակներում հեղինակն անդրադառնում է տարբեր միջազգային կառույցներին (օր.՝ Համաշխարհային մաքսային կազմակերպությանը. Առևտրի համաշխարհային կազմակերպությանը և այլն) ՀՀ անդամակցությանը. մինչդեռ առավել թիրախային կլիներ դիտարկել միայն ներդրումային գործունեության հետ առնչվող կառույցներն և դրանց ֆինանսավորմամբ ՀՀ-ում իրականացված ներդրումային ծրագրերը:

**7.** Ատենախոսն աշխատանքի 3.1 ենթահարցում ուսումնասիրել է բնակչության գրագիտության մակարդակը (աղյուսակ 6, էջ 72), միավոր ժամում վաստակած միջին աշխատավարձի մեծությունը (գծապատկեր 8, էջ 73) և նվազագույն աշխատավարձը (գծապատկեր 9, էջ 74), մինչդեռ առաջին դեպքում ՀՀ տվյալները համեմատել է նախկին ԽՍՀՄ երկրների և Թուրքիայի ու Իրանի տվյալների հետ, իսկ մյուս երկու դեպքերում՝ հիմնականում զարգացած տնտեսություն ունեցող երկրների հետ:

Կարծում եմ՝ նպատակահարմար կլիներ բոլոր դեպքերում էլ համեմատվող երկրները նույնը կամ միատեսակ լինեին:

**8.** 3-րդ գլխում Հայաստանի վերաբերյալ ուսումնասիրությունների համար ընտրված տարբեր ցուցանիշներ ներկայացված են առավելագույնը՝ 2017թ. տվյալներով: Եվ սա այն

դեպքում, երբ ներկայացված բոլոր ցուցանիշների գծով հասանելի են առավել թարմ տվյալներ, իսկ դրանք հրապարակող կառույցը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեն հասցրել է անվանափոխվել (Ատենախոսության մեջ օգտագործվում է կառույցի նախկին անվանումը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն): Միաժամանակ, ՀՀ տնտեսական աճի վրա ՕՈՒՆ-ների ազդեցությունը տնտեսամաթեմատիկական մեթոդներով գնահատելու համար որպես թվային շարք ընտրվել է 2011թ. 1-ին եռամսյակից մինչև 2017թ. առաջին եռամսյակն ժամանակահատվածը, մինչդեռ ՀՀ Վիճակագրական կոմիտեն արդեն իսկ հրապարակել է 2020թ. 3-րդ եռամսյակի ցուցանիշները:

**9.** Ատենախոսն աշխատանքի 3.3 ենթահարցում վերլուծել է ՀՀ տնտեսության մեջ օտարերկրյա ուղղակի ներդրումների դինամիկան և հիմնական միտումները, մինչդեռ հասկանալի չէ, թե այդ վերլուծություններն ինչ նպատակով են իրականացվել:

**10.** Օտարերկրյա ներդրումների ներգրավման ՀՀ-ում առկա խոչընդոտների շարքում դիտարկվել է քաղաքական և ռազմաքաղաքական անկայունությունը (էջ 87), սակայն աշխատանքը առավել կշահեր, եթե դիտարկվեր նաև պատերազմական իրավիճակը, որը թերևս, ամենաորոշիչ գործոնն է ներկա պայմաններում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված թերությունները և դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության գիտական և գործնական արժեքը, և, ըստ էության, նպատակ ունեն նպաստելու հեղինակի հետագա ուսումնասիրությունների առաջնային ուղղությունների բացահայտմանը: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և ընդգրկում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են վեց գիտական հոդվածներում:

**Հայկանուշ Գուրգենի Այվազյանի «Օտարերկրյա ուղղակի ներդրումների ազդեցությունը տնտեսական աճի վրա (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում** է Հայաստանի Հանրապետության գիտական

աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲՈՀ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, **իսկ ատենախոսության հեղինակին՝ Ը.00.06 - «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:**

ՀՊՏՀ ՄՏՀ ամբիոնի վարիչի պաշտոնակատար
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ — **Գրիգոր Նազարյան**

ՀՊՏՀ ՄՏՀ ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու, — **Աննա Փախլյան**

ՀՊՏՀ ՄՏՀ ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու, — **Արա Մկրտչյան**

**Գ.Նազարյանի, Ա.Փախլյանի, Ա.Մկրտչյանի** ստորագրությունների իսկությունը հաստատում եմ.

**ՀՊՏՀ գիտական քարտուղար՝** Նաիրա Դարբինյան

11.02.